Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներումագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>>ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույնծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրիծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

Գյուղմթերքի Արժեշղթա

Ցանկ

Բուսական արտադրանքներ 3

Կենդանական արտադրանքներ 3

Գյուղատնտեսական արտադրանքի դիտարկում 4

Մրգերի և հատապտուղների արժեշղթաներ 14

Յորենի արժեշղթա 17

Կարտոֆիլի արժեշղթա 18

Բուսական արտադրանքներ

Հայաստանում բուսական արտադրանքների համար արժեշղթայի փուլերը՝



Կենդանական արտադրանքներ

Հայաստանում կենդանական արտադրանքների համար արժեշղթայի փուլերը՝



Գյուղատնտեսական արտադրանքի դիտարկում

Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում է 29 000 մ^2, իսկ բնակչության մակարդակը՝ մոտ 3.04 միլիոն մարդ: Լինելով Սովետական Միության անդամ, Հայաստանը համարվում էր արդյունաբերականացված պետություն, որտեղ գյուղատնտեսությունն արդյունաբերության երկրորդ ամենամեծ ճյուղն էր՝ապահովելով ՀՆԱ-ի 21%-ը և զբաղվածության 27%-ը:

Գյուղատնտեսությունը, որպես Հայաստանում ՀՆԱ-ի մաս

Հայաստանն ունի 2.97 միլիոն հեկտար հողատարածք, որից 2.05 միլիոն հեկտարն ունի գյուղատնտեսական նշանակություն: Հայաստանում գյուղատնտեսական հողերի ավելի քան 60%-ը արոտավայրեր և մարգագետիններ են, իսկ վարելահողերի մեծ մասը կենտրոնացած է Արարատյան դաշտավայրում: Գյուղատնտեսական արտադրությունը և բուսատեսակների բազմազանությունը մեծապես տարբերվում են ըստ մարզերի: Պետական կադաստրի համաձայն՝մշակվող հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 448 000 հա: Մշակվող հողերի մոտ 33%-ը չի օգտագործվում տարբեր պատճառներով: Անկախությունից հետո, Հայաստանն ընդունեց հողի սեփականաշնորհման օրենքը, ըստ որի, բոլոր պետական ֆերմաները, մրգատու և խաղողի այգիները դարձան ֆերմերների սեփականությունը: Հետևաբար 340 000 փոքր ֆերմերներից յուրաքանչյուրն ստացել է շուրջ 1.4 հա հող, որը խոչընդոտում է տնտեսապես արդյունավետ շահագործմանը: Ներկայումս 10 հա կամ ավելի հողատարածք ունեցող տնտեսությունները կազմում են ընդամենը 6-7%-ը: Նման պայմաններում

անհրաժեշտ է բարելավել գյուղատնտեսական արտադրանքը և սպասարկման ենթակառուցվածքները: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 98%-ը տրամադրվում է մասնավոր հատվածի կողմից: Փոքր և մասնատված տնտեսությունների խնդիրը գյուղատնտեսության զարգացման համար մեծ մարտահրավեր է, քանի որ փոքր տնտեսությունները չեն կարող և չեն արտադրում մրցակից արտադրանքներ և չեն կարող օգտվել ժամանակակից շուկայական տեխնիկայից:

Կորիզավոր մրգերն աճում են հատկապես Արարատի նԱրմավիրի մարզերում, խնձորն աճում է Կոտայքի և Արագածոտնի մարզերում, իսկ թուզը՝ Սյունիքի և Տավուշի մարզերում: Հացահատիկային մշակաբույսերը հիմնականում աճում են Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: Անասնապահության մեծ մասը կատարվում է Շիրակի և Գեղարքունիքի մարզերում:

Գյուղատնտեսական արտադրանքի մակարդակն ըստ մարզերի

	Համախառն արտադրանք (բիլլ. դրամ)	Կշիռ, %
Երևան	7.5	0.9
Արագածոտն	82.0	9.8
Արարատ	124.0	14.8
Արմավիր	144.0	17.1
Գեղարքունիք	160.6	19.1
Լոռի	59.7	7.1
Կոտայք	52.7	6.3
Շիրակ	97.8	11.6
Սյունիք	52.7	6.3
Վայոց Ձոր	18.2	2.1
Տավուշ	41.2	4.9
ՀՀ	840.4	100.0

Հացահատիկները զբաղեցնում են երկրի հողատարածքների կեսից ավելին: Ցորենն ամենակարևոր բերքն է, որը բավարարում է ընդհանուր կարիքի 3%-ը, մնացածը՝ ներկրվում է: Ցորենի աճեցումն այնքան եկամտաբեր չէ, որքան մրգերինն ու բանջարեղենինը, հատկապես ցածրադիր վայրերում, (1 500 մետրից ցածր), որտեղ ոռոգումն անհրաժեշտ է մշակաբույսերի մշակման համար և հետևաբար ավելացնում է արտադրության արժեքը:

Վերջին տարիներին մրգերի ու բանջարանոցների մշակման վայրերը փոքր-ինչ մեծացել են: Հողատարածքները, որոնք ծածկված են խաղողի այգիներով, զգալիորեն կրճատվել են հողի սեփականաշնորհումից հետո:

Սակայն, վերջին տարիներին խաղողի արտադրությունը վերականգնվել է, և խաղողն արտադրվում է ոչ միայն անհատական, փոքր ֆերմերային տնտեսությունների, այլև խոշոր տնտեսությունների կողմից: Անասնաբուծական արտադրանքը մի քանի մեծ տատանումներ է ստացել կենդանական ծագման բազմաթիվ հիվանդությունների պատճառով, սակայն երկարաժամկետ արտադրության միտումները շատ չեն փոխվել:

2004-2008թթ. ընթացքում գյուղատնտեսության միջին տարեկան աճը կազմել է մոտ 7,4%: Սա նպաստեց սննդամթերքի ինքնապահովման բարելավմանը, որը 2008թ-ին աճեց մինչև 60%: Բույսերի, կարտոֆիլի, հիմնական մրգերի, խաղողի և հորթի մսի տեղական պահանջարկը բավարարում է տեղական արտադրության 98%-ը, ինչը չի կաչելի ասել ցորենի (40%), այլ հացահատիկների (50-55%), թռչնի մսի (15%) և խոզի մսի (50-55%) համար: Ռուսաստանն ու Ղազախստանը ներմուծում են հիմնականում ցորեն և բրինձ, իսկ սառեցված միսը (վերամշակող գործարանների կողմից) ներմուծվում է Հնդկաստանից և Բրազիլայից:

Հարկ է նշել, որ այս բոլոր թվերը կրկին ընդգծում են, որ գյուղատնտեսությունը կարևոր է Հայաստանի համար: Մասնավորապես, գյուղատնտեսության բարելավումը կարող է հանգեցնել աղքատության կրճատմանը, սննդի անվտանգությանը, կյանքի որակի բարձրացմանը՝ հատկապես գյուղական բնակավայրերում, և այլ ոլորտների ռազմավարական բարելավմանը:

Գյուղատնտեսական արժեշղթա



Առկա են հետևյալ 4 արժեշղթաները՝

1. Կաթի արժեշղթա
2. Մսի արժեշղթա
3. Բանջարեղենի արժեշղթա
4. Մրգերի և հատապտուղների արժեշղթա

Կաթի արժեշղթա

Կաթնամթերքի ոլորտում ներքին շուկաներում պահանջարկը կապված է եկամտի ավելացման հետ, իսկ ռուսական շուկան համարվում է խոստումնալից արտահանման համար: Հայաստանից խոշոր քանակով արտահանվում է պանիր՝ հիմնականում Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերից: Կաթնամթերքի համար ներքին պահանջարկի աճը հիմնականում պայմանավորված է բնակչության «մեկանգամյա» եկամտով: Եթե եկամուտներն աճեն, պահանջարկն այս ոլորտում նույնպես կաճի, ինչպես նաև շուկայում կլինի մրցակցություն՝ կախված գնից և որակից: Այնուամենայնիվ, ոլորտի առաջընթացը և խոշորացումը հենվում է արտահանման վրա, որի համար կա հստակ ընթացիկ պահանջարկ: Ռուսաստանում գոյություն ունեցող պահանջարկը, մինչդեռ դա կարող է նախապես ստեղված լինել սփյուռքի շուկաների միջոցով, իհարկե, ավելի լայն է, և հիմնված է խորհրդային ժամանակաշրջանում ստեղծված պահանջարկի վրա: Ռուսաստանում պանրի ընդհանուր պահանջարկը գնահատվում է տարեկան 450 000 տոննա, իսկ արտադրությունը հասել է այս մակարդակի միայն 50%-ին: Հայաստանը լավ տեղ է գրավում ռուսական շուկայում մրցակցելու համար, եթե այն կարողանա ապահովել որակյալ և համապատասխան քանակության արտադրանք: Հայաստանում կաթի արտադրությունը համարվում է բարձր՝ համեմատած հարևան երկրների հետ, այնուամենայնիվ Հայաստանում կաթնամթերքի միայն 44.7%-ն է շուկայականացված: Մնացած կաթն օգտագործվում է փոխանակման կամ գյուղական տնային տնտեսությունների ներքին օգտագործման համար: Կաթի ներքին օգտագործման 70%-ը մշակվում է գյուղական տնային տնտեսությունների կողմից, ինչպես նաև օգտագործվում է տեղական գյուղատնտեսական շուկաներում փոխանակման կամ ուղղակի վաճառքի համար:

Կաթնամթերքի շուկան ըստ մարզերի

	Վաճառված, %	**Փոխանակված, %**	**Օգտագործված տնային տնտեսությունների կողմից**	**Վերամշակված, %**
Արագածոտն	29.2	16.4	54.4	77.9
Արարատ	61.3	1.8	36.9	66.6
Արմավիր	65.3	2.0	32.7	74.4
Գեղարքունիք	30.6	20.3	49.1	86.8
Լոռի	52.8	2.8	44.4	28.1

Կոտայք	79.0	1.1	19.9	61.8
Շիրակ	49.7	3.2	47.1	75.7
Սյունիք	51.6	8.0	40.4	29.7
Վայոց Ձոր	14.8	19.7	65.5	53.5
Տավուշ	24.0	12.0	64.0	87.8
ՀՀ	44.7	9.9	45.4	69.7

Կան որոշակի շրջաններ, որտեղ կաթնամթերքի շուկան շատ ցածր մակարդակի վրա է: Օրինակ՝ Վայոց Ձորի մարզում շուկան կազմում է 14,8%, Տավուշի մարզում՝24%, Արագածոտնում՝ 29,2%: Այս իրավիճակը հիմնականում պայմանավորված է մարզերում հավաքագրման կենտրոնի ցանցի անբավարար զարգացմամբ: Բացի այդ, կաթի գնի սեզոնային տատանումները խոչընդոտում են նաև կաթի ցածր իրացվելիության շարունակական աճին, ինչը բացասաբար է անդրադառնում արժեշղթայի ընդհանուր զարգացման վրա:

Ֆերմերների կողմից վաճառված կաթնամթերքի գների դինամիկան, դրամ



Կովերի միջին տարեկան արտադրողականությունը նույնպես ցածր է: Այն չի գերազանցում 2,036 լիտրը, ինչը մոտ 30%-ով ցածր է եվրոպական միջին ցուցանիշից:

Կաթի միջին տարեկան եկամտաբերությունը, լիտր



Կաթնամթերքի արժեշղթան



Մսի արժեշղթա

Տեղական մսի արտադրությունը հիմնված է անասնապահության վրա: Գյուղատնտեսության այս ենթակառուցվածքը հիմնականում իրականացվում է գյուղական տնային տնտեսությունների կամ ֆիրմաների կողմից: Անասնաբուծության առևտրային կազմակերպության մասնաբաժինը բավական ցածր է՝1.49%: Բացառություն է կազմում թռչնաբուծությունը, որտեղ առևտրային կազմակերպությունների մասնաբաժինը կազմում է 54%: Այլ կերպ ասած, թռչնաբուծությունը գյուղատնտեսության ամենաարդյունավետ ենթակառուցվածքն է: Տեղական արտադրանքի մոտ 81%-ը վաճառվում է, և միայն 19%-ն օգտագործվում է կամ գյուղական ընտանիքների կողմից, կամ փոխանակման համար:

Մսի հիմնական արտադրատեսակների տեղական արտադրության դինամիկան, տոննա,%

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Միս (մսի քաշ), որոնցից	**66.8**	**69.7**	**70.9**	**70.7**	**69.5**	**71.7**	**73.9**	**83.3**
Տավարի և հորթի միս	40.4	43.3	49.3	49.6	48.0	48.2	47.6	53.7
Ոչխարի և այծի միս	7.2	7.3	7.4	8.9	8.2	8.4	8.5	9.6
Խոզի միս	14.1	13.3	7.5	7.2	7.9	9.4	9.5	10.7
Թռչնամիս	5.1	5.8	6.7	5.0	5.4	5.7	8.3	9.4

Եթե ուսումնասիրենք տեղական մսի արտադրությունը, մսի արտահանումն ու ներմուծումը, տարբեր տեսակի մսեղենի մանրածախ գները և շուկայական մակարդակը, կարող ենք տեսնել տեղական մսի շուկայի ծավալը՝ մոտ 227 մլրդ դրամ, որից 27.5%-ը ապահովում է ներմուծված մսի տարբեր տեսակներով, այդ թվում՝խոզի, տավարի, թռչնի, ոչխարի և այլն: Այս արժեշղթայում ֆերմերների մասնաբաժինը կազմում է մոտ 52% կամ 119 մլրդ դրամ: Եթե այս ցուցանիշը համապատասխանեցնենք գյուղական տնային տնտեսությունների թվին, ապա ակնհայտ է, որ մեկ գյուղացիական տնտեսության միջին տարեկան եկամուտը կազմում է մոտ 418.300 դրամ: Մսամթերքի արտադրության ծավալները 2008-2013թթ. ընթացքում աճել են գրեթե 50%-ով: Աճի դինամիկան արձանագրվել է հատկապես երշիկեղենի արտադրության մեջ, ինչը կազմում էր ավելի քան 40%: 2013թ-ին 1կգ տեղական մսամթերքի միջին գինը տավարի մսի համար կազմել է 2595 դրամ, խոզի մսի համար՝3122 դրամ, թռչնամսի համար՝ 1600 դրամ, մինչդեռ, ներմուծվող մսամթերքի արժեքը (ներառյալ ավելացված արժեքի հարկը և

մաքսատուրքը)՝տավարի մսի համար գրեթե 1320 դրամ, խոզի մսի համար՝ 1265 դրամ, թռչնամսի համար՝660 դրամ: Այդ իսկ պատճառով մսամթերք արտադրող ընկերությունները հիմնականում օգտագործում են ներմուծվող միս:

Վերամշակված մսի տեղական արտադրության դինամիկան, տոննա,%

Տարի	2008	2009	2010	2011	2012	2013
Մսամթերք	3.182	4.147	3.954	4.489	4.672	4.757
Մսամթերքի կիսաֆաբրիկատներ	316	394	545	499	499	633

Ըստ պաշտոնական վիճակագրության՝2012թ-ին մսամթերքի, այդ թվում երշիկների արտադրության ծավալները կազմել են 4672 տոննա: Նույն թվականին ներկրվել է 5,2 հազար տոննա երշիկեղեն (ապխտած, կիսաապխտած և այլն): Ներկրվող երշիկների 1կգ-ի միջին արժեքը կազմել է 554.9 դրամ:

Մսի և մսամթերքի արտաքին առևտուր, տոննա,%

	Ներմուծում			Արտահանում		
	2011	2012	2013	2011	2012	2013
Միս	18.758	18.703	15.260	0	18	0
Մսամթերք	7.073	5.162	5.388	185	234	367
Մսամթերքի կիսաֆաբրիկատներ	116	185	484	97	396	130

Մսամթերքը և տեղական արտադրության երշիկները կազմում են ներքին սպառման 46%-ը: Դիտարկման և արդյունավետ պահանջարկի գնահատումների հիման վրա, այս ցուցանիշը պետք է ավելի մեծ մաս կազմեին: Այս անհամապատասխանությունը պայմանավորված է հետևյալ երևույթներով՝

- 2013թ-ին ներմուծվել է 5.4 հազար տոննա տավարի և 8.1 հազար տոննա խոզի միս, որոնց մեծ մասը սպառվել է տեղական մսի վերամշակող ընկերությունների կողմից:
- Մսամթերքի վերամշակման ոլորտը գրեթե ամբողջությամբ հիմնվում է ներմուծվող մսի վրա: Սա նշանակում է, որ արժեշղթայի տեսանկյունից տեղական տավարի արտադրության և վերամշակման ոլորտների միջև կապը բացակայում է: Հետևաբար, այդ արժեշղթայի զարգացման համար նախատեսված որոշակի միջամտությունների իրականացումը մշակման ոլորտում համարվում է անհիմն:

Բանջարեղենի արժեշղթա

Արտադրության ծավալով բանջարեղենն ու կարտոֆիլը կարծես թե Հայաստանին արտադրության խոշորագույն ընդլայնման հնարավորություն են տալիս: Ներքին վերամշակման բացակայության և, վերջիվերջո, հագեցված տեղական պահանջարկի պայմաններում, նման զարգացման հաջողությունը մեծապես կախված կլինի կայուն արտահանումից: Ինչպես վրացական, այնպես էլ ադրբեջանական շուկաներում, մեծ արտահանման հնարավորություն կա, քանի որ Վրաստանում աճեցման սեզոնը սահմանափակ է, և ժամանակային առումով մի փոքր տարբերվում է Հայաստանից, իսկ Ադրբեջանն արտադրում է միայն սահմանափակ քանակությամբ կարտոֆիլ (չնայած բարձր պահանջարկի): Այժմ Վրաստանի կարտոֆիլն արտահանվում է ոչ պաշտոնական, առանց ներմուծման 35% գումարի վճարման: Եթե Վրաստանը հետագայում այդ գումարը պահանջի, ապա տվյալ արտահանումը չի կարող շահութաբեր լինել: Ադրբեջանական շուկայի համար շարունակվող սահմանային միջադեպերը նշանակում են, որ արտահանումը (անկախ նրանից, պաշտոնական թե ոչ) կարող է անընդհատ հարցի տակ լինել: Հայկական կարտոֆիլի արտահանման ներուժն արդեն մեծանում է, ինչը կարող է ցույց տալ վերջին տարիներին արտադրության ծավալների ավելացումը: Արտադրության աճը դեռևս դանդաղ է, ինչը պայմանավորված է ցանքատարածքների փոքր չափսերով: Վրացական շուկայում մրցակցելու համար աճեցման սեզոնի դիվերսիֆիկացիան բավարար չէ: Երկարաժամկետ հեռանկարում Հայաստանը պետք է ավելացնի մեկ հեկտար կարտոֆիլի բերքատվությունը, որը մինչ այժմ մրցակցում է ԱՊՀ երկրների հետ, բայց շատ ցածր է՝ համեմատած Թուրքիայի: Վերջին տարիներին Հայաստանում բանջարեղենի բերքատվությունը զգալիորեն ավելացել է ԱՊՀ երկրներ արտահանման համար: Երկրի վերամշակման և պահպանման տեխնոլոգիաների առաջընթացի շնորհիվ ԱՊՀ-ի շուկաներում առկա են հայկական բանջարեղենի (հատկապես չորացրած կամ սառեցված բանջարեղենի) արտահանման ներուժ: Վրաստանով ցամաքային փոխադրումների բարելավման և Մոսկվայի կանոնավոր չվերթների առկայության դեպքում կարելի է կանխատեսել, որ Ռուսաստանում թարմ մանրածախ շուկաներում լոլիկի, կաղամբի, վարունգի և պղպեղի ստանդարտ բարձրարժեք բանջարեղենի արտահանումը զգալի հնարավորություն է հայ արտադրողների համար, հատկապես, եթե նրանք կարողանան ոչ-սեզոնային արտադրանք ապահովել կամ բարձրացնել ջերմոցային արտադրությունը: Նման բիզնեսի զարգացումը կախված է ռուսական մեծածախ և մանրածախ շուկաներում

առևտրականների բավարար կապից, որպեսզի կարողանան նման համակարգային աշխատանք կատարել: Նման կազմակերպություններից է «ՍՊԱՅԿԱ»-ն, որն ապահովում է բանջարեղենի կայուն մատակարարումը ռուսական մանրածախ շուկա:

Լոլիկը Հայաստանում մշակվող ամենատարածված բանջարեղենն է, այն կազմում է ցանքատարածքների ընդհանուր ծավալի 25-30%-ը: Լոլիկի ցանքատարածքների ընդհանուր թվի 82%-ը կենտրոնացած է Արմավիրի և Արարատի մարզերում:

Կաղամբը համարվում է բանջարեղենների ցանքատարածքների երկրորդ ամենամեծ տոկոսն ունեցող բանջարեղենը:

Պղպեղի աճեցման քանակն ընդլայնվել է տեղական վերամշակման ընկերությունների աճող պահանջարկի արդյունքում: Հայաստանում պղպեղի հիմնական արտադրատեսակներ են՝

- Պահածոյացված կարմիր պղպեղ
- Աջիկա
- Մարինացված կծու պղպեղ
- Պղպեղի փոշի
- Պապրիկա

Արտահանման միակ շուկան ՌԴ-ն է, որը մեծ քանակով ներմուծում է Իսրայելից, Նիդեռլանդներից և Չինաստանից: Ռուսաստանի Դաշնություն թարմ պղպեղի ներմուծման գինը զգալիորեն տատանվում է, հաճախ՝ ներմուծման միջին գնից ցածր: Հունաստանից և Չինաստանից ներկրվում են պղպեղի փոքր ծավալներ:

Բանջարեղենի արժեշղթա



Մրգերի և հատապտուղների արժեշղթաներ

Հայաստանի թարմ պտուղների նկատմամբ ավելցուկային պահանջարկը տարիներ շարունակ առկա է, չնայած բարձր բերքատվության: Հիմնական պահանջը, ըստ երևույթին, գալիս է ռուսական շուկաներից, որտեղ հայկական միրգը սպառողների շրջանում մեծ պահանջարկ է վայելում (հատկապես տանձի և ծիրանի համար): Մրգի արտադրությունը մեծապես կախված է եղանակային պայմաններից: Հայաստանում աճող մրգերի սորտերի մեծ մասը սառնամանիքի հանդեպ դիմացկուն չեն, և եղանակային անբարենպաստ պայմանները վերջին տարիներին ցածր եկամտաբերության են հանգեցրել: Մրգեր վերամշակողները պետք

է մրցակցային գին դնեն, նաև հաշվի առնելով իրենց ծախսերը: Վերջիններս մրցակցում են նաև ներմուծող երկրների՝ Թուրքիայի, Հարավային Ամերիկայի և Հարավ-Արևելյան Ասիայի հետ, որոնք իրենց արտադրանքն առաջարկում են նկատելիորեն ցածր գնով:

Ծիրանի բերքը չափազանց անկայուն է եղանակի նկատմամբ զգայունության պատճառով, ինչը ծիրանի աճեցման հիմնական խոչընդոտն է: Ծիրանի բերքի անհավասարությունը բացատրվում է չափազանց բարձր զգայունությամբ և եղանակային պայմաններից կախվածությամբ: Արարատյան դաշտում ծիրանի ծառի կյանքը 60-70 տարի է: Հայաստանում աճեցված երկու հայտնի ծիրաներն են՝ «Երևան» և «Սաթենի»: «Երևան»-ն ավելի գրավիչ տեսք ունի և հարմար է թարմ սպառման համար, իսկ «Սաթենի»-ն ավելի հարմար է չորացրած մրգերի արտադրության համար:

Խնձորը տարածված է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում և բավարարում է ներքին պահանջարկը, բացառությամբ ներկրման անհրաժեշտության: Խնձորն ամենատարածված միրգն է Հայաստանի տարածքում, և հարմար է մշակման համար՝ ի շնորհիվ սորտերի բազմազանության և եղանակային պայմանների հարմարվողականության: Այգիների 12%-ը գտնվում է Արարատյան դաշտում: Խնձորը սովորաբար օգտագործվում է հյութի, ջեմի և մանկական սննդի արտադրության մեջ: Խնձորի հյութը Հայաստանից արտահանվող միակ արտադրանքն է, սակայն արտահանման ծավալներն աննշան են:

Դեղձն ունի աճեցման ռիսկեր, սակայն իրացման ռիսկերը չափավոր են: Դեղձի բերքը տատանվում է կախված եղանակային պայմաններից: Ծիրանի նման, դեղձը հաճախ վնասվում է ցրտերի ու անձրևների ժամանակ: Դեղձից հիմնականում արտադրում են ջեմ, հյութ և չիր: Դեղձն օգտագործվում է նաև մրգային օղի արտադրելու համար: Վերամշակված դեղձի արտահանման ցածր մակարդակը բացատրվում է միջազգային շուկաներում դեղձի արտադրանքի հանդեպ պահանջարկի համեմատաբար ցածր մակարդակով:

Սալորի մշակումն ամենաարագ զարգացող հատվածն է: Թարմ սպառման սորտերի համար հարմարեցված մշակումը և ներքին շուկայական սալորի հանդեպ հետաքրքրությունը բարձրացրեց վերջինիս պահանջարկը: Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստան է ներմուծվել սալորի բազմաթիվ սորտեր՝ ավելացնելով թարմ և վերամշակված վիճակում սպառման համար մեծ քանակությամբ տեսակներ: Վերամշակված վիճակում հիմնականում օգտագործվում է սալորաչիրը: Հայաստանի միակ արտահանման շուկան Ռուսաստանի Դաշնությունն է:

Հատապտուղների մշակումը հիմնականում պայմանավորված է սննդամթերքի վերամշակող ընկերությունների հետաքրքրություններից, որոնք ձեռք են բերում հատապտուղներ (հիմնականում ազնվամորի և ելակ)՝ 650 դրամ /800 դրամ/ կգ:

Սակայն ֆերմերները չեն կարողանում բավարարել սննդամթերքի վերամշակող ընկերությունների պահանջարկը: Հատապտուղների բերքահավաքը չի ներառում վայրի հատապտուղներ: Հատապտուղները մշակվում են պահածոներ և հյութեր պատրաստելու համար: Հատապտուղները զգայուն են ջերմության և տեղափոխման նկատմամբ: Թարմ արտահանելու համար հատապտուղները պետք է սառեցվեն: Հայաստանում սննդի վերամշակման միայն մի ընկերությունն ունի այդպիսի սառնարաններ: Ներկայումս հատապտուղների արտահանումը, թարմ և պահածոյացված վիճակում, աննշան է, սակայն դա որոշվում է սահմանափակ մատակարարմամբ:

Մրգերի արժեշղթա



Ցորենի արժեշղթա

Հացահատիկի մշակումը շատ կարևոր է Հայաստանի համար աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով, աղքատության հաղթահարման և արտակարգ իրավիճակներում պարենային անվտանգության ապահովման համար: Գների տատանումներն անմիջականորեն ազդում են ողջ բնակչության վրա, հատկապես աղքատ հատվածի, որը մեծ դժվարությամբ է կարողանում պահպանել իր ապրելակերպը: Դա հորդորեց կառավարությանն առաջնահերթ դարձնել հացահատիկի արտադրությունը և իրականացնել Հայաստանում ցորենի արտադրության ծավալների ավելացմանն ուղղված ծրագրեր: Ցորենի ներմուծման և արտադրության տվյալները ցույց են տալիս, որ ցորենի արտադրության ինքնաբավությունը բավականին ցածր է, և Հայաստանը մեծապես կախված է միջազգային ցորենի մատակարարներից՝ հիմնականում Ռուսաստանից (ցորենի 50 %-ը ներկրվում է):

Ցորենի արժեշղթա



Ցորեն

Ալյուր

Թխված արտադրանք

Հայաստանում ցորենի արտադրությունը, ներմուծումը և ինքնաբավության մակարդակը

	2007	2008	2009	2010	2011
Ցորենի արտադրություն, հազար տոննա	254.2	225.7	198.1	183.5	224.1
Ցորենի ներմուծում, հազար տոննա	443.0	347.2	397.8	365.5	392.0
Ինքնաբավության,%	36.5	39.5	33.3	33.5	36.5

Կարտոֆիլի արժեշղթա

Կարտոֆիլը, ցորենի հետ մեկտեղ, օգնում են լուծել սննդամթերքի անվտանգության հարցերը: Կարտոֆիլի արտադրությունը հիմնականում կենտրոնացած է Գեղարքունիքի մարզում, որտեղ կարտոֆիլը համարվում է շատ ֆերմերների եկամտի հիմնական աղբյուրը: Երկրում արտադրված կարտոֆիլի գրեթե 50%-ը Գեղարքունիքի մարզից է:

Գեղարքունիքի մարզում կարտոֆիլի արտադրությունը

	Հայաստանի Հանրապետություն	Գեղարքունիքի մարզ
Գյուղատնտեսական համախառն արտադրանք, ընդհանուր	552.1	94.0
Կարտոֆիլի ցանքատարածքներ	31998.0	14742.0
Կարտոֆիլի համախառն բերք	593.6	254.3

Իրականացվող ուսումնասիրություններն ապացուցում են, որ կարտոֆիլի արտադրությունը կենսական նշանակություն ունի Գեղարքունիքի մարզի գրեթե բոլոր ընտանիքների համար:

Կարտոֆիլի արժեշղթան շատ քիչ մասնակիցներ ունի և բավականին պարզ է: Գյուղատնտեսական արտադրությունը, ինչպես նաև բերքահավաքի և պահեստավորման աշխատանքները հիմնականում իրականացվում են ֆերմերների կողմից: Կարտոֆիլի մշակման ծավալները աննշան են (կան միայն մի քանի շատ

փոքր կարտոֆիլի չիպսեր արտադրողներ), ուստի վերամշակում գոյություն չունի: Կան որոշ կոմերցիոն պահեստարաններ և մի քանի մեծածախ խանութներ, որոնք կարտոֆիլ են գնում ֆերմերներից և վերավաճառում սուպերմարկետներին կամ առևտրականներին շուկաներին:

Կարտոֆիլի արժեշղթա